Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1538

1999

258.

ԼՈՒԷՐ

ՈՒՂՂԱՓԱՌ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆԵՐԻՆ

ՏԵՏՐԱԿ ԸՌԵՂԻՆ

Թարգմանութիւն

ՊՈՂՈՍԻ ԶՕՀՐԱՊԵՏԱՆՑ ԱՐՑԱԽԵՑՒՈՑ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
- 6 ІЮНЬ 1898
Центр.-Лит.
Арм. Благ. Общ.

Ի ՄՈՍԿՈՎ

1870

Լեր
1538

ՆՈՒԷՐ

ՈՒՂՂԱՓԱՌ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆԵՐԻՆ

ՏԵՏՐԱԿ ԱՌԱՋԻՆ

Թարգմանութիւն

ՄՈՎՍԻՍԻ ԶՕՀՐԱՊԵԱՆՑ ԱՐՑԱԽՑԻՈՅ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բ. Ընկերութ. ընկերք.
– 6 ՅՈՒՆԻ 1898
Центр.-Лит. Чит.
Арм. Благ. Соб.

Ի ՄՈՍԿՎԱ

Въ Университетской типографіи (Катковъ и К°),
на Страстномъ бульварѣ.

1870

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՍՍՀ-ի ԳԱԱ Գրադարան

Дозволено Цензурою. Спб. 30 Сентября 1869 года.

Зр 1543
415 38-60

ЕЯ ПРЕВОСХОДИТЕЛЬСТВУ

МАРІИ ВАСИЛЬЕВНѢ

КОЛЮБАКИНОЙ.



ВЪ ЗНАКЪ ВЫСОКАГО УВАЖЕНІЯ
И ИСКРЕННѢЙШЕЙ ПРЕДАННОСТИ

ПОСВЯЩАЕТЪ

Моисей Зурабовъ.

ԿԵՆՏՐ.-ԳՐԱԴ.-ԸՆԹԵՐ.
Կ. Հ. Բարեգ. ընկերք.
– 6 ՅՈՒՆԻ 1898
Центр. Библиот.-Чит.
Арм. Благ. Общ.

Lt. Lorenzen

ԿԵՆՏՐ. - ԳՐԱԴ. - ԱՆԹԵՐ.
Կ. Հ. Բ. Ս. Ս. Ս. Ս. Ս.
- 6 ՅՈՒՆԻՍ 1898
Центр. Библиот. - Чит.
Арм. Благ. Общ.

Մեծ է մեր Աստուած. Նրան վայել են
փառք, արքայութիւն, զօրութիւն, պատիւ.
Մեծ է և Նրա գործքերը ամեն,
Բարերարութիւն, գթութիւնն անթիւ։
Նա կարողութեամբ իւր ամենազօր
Ստեղծեց ոչինչից ողջոյն մի խօսքով.
Նա տուաւ և կեանք ստեղծուածոց բոլոր,
Որ և՞ պահում իւր հրզօր շքով։

Նա ամեն տեղ է. ոչինչ, ոչ ուրեք
Չէ կարող լինել առանց Նրա կամքին.
Նրա աչք զօրեղ միշտ ամեն ուրեք
Պահպանում կարգ բոլոր աշխարհքին։
Նա բնակում խոնարհ սրտերում,
Աղդում հոգւոյ սեր դէպ 'ի բարին,
Հեղոյց օգնում, անարգում, գլորում՝
Հողոյ հաւասար, վէս գոռոզներին։

Նա ծածկագէտ է, չկայ ինչ գաղտնի
Ողջ արեգնքում Նրբա առաջին.
Նա տեսանում ամեն ինչ յայտնի,
Այս է Նրան միշտ խաւարի միջին.
Լսում անանկայ ցաւոց հառաչանք,
Գիտում գաղտնիք, հոգւոյ խորհուրդներ,

Ծածուկ չեն նրանից բնաւ ինչ յանցանք,
Եւ անդնդոց մէջ, դժոխքի խորքեր։
Նա դիմասիրտ է. չկայ բնաւ վախճան
Նախասահմանած բարի կարգերին.
Սիրով և քնքուշ դիմով հայրական
Նա տալիս է կեանք իւր ստեղծածներին.
Վտանգների մէջ նա է մեր պաշտպան,
Տխուր դէպքերում յոյս, մխիթարիչ,
Մեղքի ծանրութիւից մեր այժ օգնական,
Յետ մահուան նա մեր հանդիստ, ազատիչ։
Նա բարերար է, իմաստուն կամքով
Յանդիմանումէ նա մեր չարութիւն,
Եւ համբերելով իւր երկայն մտքով,
Ուղղումէ միշտ մեզ դէպ 'ի բարութիւն։
Երբ դառնանք, անենք աղօթք, պաղատանք
Դէպ 'ի նա լալով՝ տալ մեզ թողութիւն,
Նա արատներից շուտ մեր խղճմտանք
Կ'մաքրէ, կ'տայ խոկոյն փրկութիւն։
Մեր մանկութենից նա մեզ կերակրեց,
Պահեց, պահպանեց հանդիստ շարունակ.
Եւ տրամութեան մէջ մեզ մխիթարեց
Նա մեր անդադար Հայր, դաստիարակ,
Ի՞նչ ենք մեք ամենքս,—ոչ անցաւոր հող
Ոչ մեր բաժիններ պտուղ կործանման՝
Մենք ապերախտ ենք դէպ 'ի մեր ստեղծող,
Մեր հոգւոյ մէջ կայ և թոյն մեղանչման։
Վասնի բարի է նա՝ մեր ստեղծող
Նա հեղութիւն է, լոյս, համբերութիւն.
Նա մեր մեղքերում յայտնուեց մեզ օգնող.
Զոհելով Որդին, տուաւ քաւութիւն։

Ո՛հ, ինչ մեծ հրաշք է բարութեան, սերի.
Սերով չարութիւնն Նա ոչնչացրեց
Եւ սուրբ արիւնով բոլոր մեղքերի
Շնորհեց թողութիւն, յաւիտեան մաքրեց։
Դեղ՝ Տէր, փայել են սէր, փառք, գովութիւն,
Եւ իշխանութիւն, պատիւ, դոհութիւն։
Ո՛հ, երանի՜ թէ՝ լինէր իմ ողջ կեանք
Գովաբանական քեզ միայն մաղթանք։
Հատուցէք Նրան պարտք, տուէք պատիւ,
Գովեցէք երգով միշտ գիշեր և տիւ,
Երկիր և երկինք, — ամեն ինչ որ կայ,
Բոլոր արարածք՝ անցեալ, ապագայ։

II.

Դա երես անկեալ, Տէր՝ քո առաջին,
Հոգւով արժանի յանցանքիս պատժին՝
Աղաչեմ, շնորհիր հոգւոյս թողութիւն,
Ցաւիս փրկութիւն, մեղքիս քաւութիւն։
Դու սուրբ արիւնովդ մեղքերս լուացիր,
Դու քո սերով իմ կեղտերս մաքրեցիր։
Ա՜խ, յիշիր Տէր քո մեզ համար մաղթանք,
Միշտ, ցաւ, նեղութիւն, դատն չարչարանք։
Դո քաշած ցաւի, տանջանքին համար,
Տո՛ւր հոգւոյս վարձ ո՛չ մեղքերիս յարմար,
Դու մահովդ մահին, դժոխքին յաղթեցիր,
Նրանով փրկութեան ինձ դուռն բացիր։

III.

Տո՛ւր իմ հոգւոյն կեանք՝ ո՛վ Տէր իմ Աստուած,
Ընդունիր Նրան քեզ իբրև սատուած.

Դու խաչն վերայ տարիր Նրա համար
Զարշարանք, վերքեր, ցաւեր անհամար։
Թող նա, որ քեզնով հասաւ փրկութեան,
Լենի քեզ պատկան, քոյ միշտ յաւիտեան։

Տէր, տուր իմ հոգւոյն կեանքի իրաւունք
Մաքրիր իմ սիրտը, խորհուրդ, մտածմունք,
Տալ նրան ամէն կարօղ ես դու՝ Տէր,
Տես իմ նեղութիւն, իմ փորձանք, ցաւեր։
Հիւանդ եմ տկար, անոնկ և աղքատ,
Դու իմ զօրութիւն, իմ կեանք անընդհատ։

Տէր, տուր իմ հոգւոյն միշտ կենդանութիւն,
Հեղիր նրա վերայ Դու քո զօրութիւն,
Մի թողիր նրան կործանվել այս տեղ,
Գլորիր գերեզման ամէն յանցանք, մեղ։
Որ սրտով, հոգւով կարենամ յաւէտ
Միաւորվելու քեզ հետ՝ փրկիւէտ։

IV.

Դու հովիւ բարի, ինքդ քո ձեռքով
Թոյլ ոչխարներին ման ածօղ պահօղ,
Դու բժիշկ, անթիւ հրաշալի գործքով
Ցաւագարներին, հիւանդաց բուժօղ,
Տկար եմ ցաւոտ. եկ, Տէր ինձ հասիր,
Եւ քաղցրացուր իմ դառնութիւն սրտիս,
Քեզնով զօրացուր, ինձ մխիթարիր։
Երբ կանցնեն իմ վիշտ, ցաւեր հիւանդիս,
Կ՝ծագի սրտիս լոյս խաղաղութեան.
Կ՝ինեմ ես առողջ հոգւով յաւիտեան։

V.

Ա՛խ, ես ո՞ր գտնեմ հովանի, հանգիստ
Ծանր մեղքերիս դառնութենից խիստ.
Ո՞վ կարող է տալ փրկութեան հընար
Վիրաւորելոյս ցաւին չարաչար։
Ո՛չ. աշխարհ բոլոր կարող չէ իմ սուգ
Փարատել, սրբել իմ դառն արտասուք։
Ո՛վ Տէր իմ Փրկիչ. ցաւիս դեղ, դարման.
Ես կատարելով քո բարի հրաման՝
Ահա դէպ 'ի քեզ դիմեմ, աղօթեմ,
Խեղճ քո արարածս, աղաչեմ, մաղթեմ՝
Հեղիր իմ վերայ կաթիլ բարութեան
Առատ աղբիւրից քո ողորմութեան.
Քոյ միայն շնորհք, բարերարութիւն
Կարող են տալ ինձ խեղճիս օգնութիւն.
Ամէն ծանրութիւն իմ ողջ յանցանքին,
Պատճառ դառնամահ իմ չարչարանքին,
Ընդունիր, ծածկիր մեջ քո վերքերին.
Նրանցով կ'ելնի դեղ իմ ցաւերին։
Ինքդ արիւնով քո սուրբ, անարատ
Լուացիր մեղքերս՝ իմ հոգւոյ արատ,
Մոռացիր իսպառ իմ բոլոր յանցանք
Ածիր սրտիս մեջ քո մխիթարանք,
Տուր քո բարութիւնդ և ինձ ճաշակել,
Քոյ շքոյ ներքև հանգիստ բնակել։
Յաւիտենական սէր է քո անուն,
Մեղքերիս համար թափեցիր արիւն,
Տարեր պատիժներ, մահ ընդունեցիր,
Որով երկիւղից ինձ ազատեցիր.

Իմ ամէն յանցանք մահին գերեզման
Քեզ հետ միասին, հետ քո սուրբ թաղման։
Եւ ցաւագար եմ, մաշուած, թոյլ, տըկար,
Քաշումեմ պատիժ, դատաստան արդար։
Բայց ցէր իմ, քո գութ անբաւ է անհուն՝
Երբ ես հաւատով, յուսով հաստատուն
Ընդունումեմ քո արիւն սուրբ անգին,
Նըբանով ես կեանք խմումեմ կրկին։
Եւ այս անքննին խորհուրդ գերաբուն
Ունի այն շնորհ, այնքան զօրութիւն,
Որոյ և փոքրիկ կաթիլ մի միայն
Կարող է վատթար մեղքեր ամենայն
Ջնջել իսկապէս, մաքրել բընաւին,
Եւ յաղթահարել սատանի դաւին։
Ո՛չ մեղք, ո՛չ դժոխք և ոչինչ փորձանք,
Ո՛չ այլ և իսկ մահ չ՚են ինչ զարհուրանք
Նըբան, ոյր թէ և աչքի քթիթի մի ժուկ
Հովանաւոր է քո զօրեղ բազուկ։
Նրանում չկայ երկիւղ մահից խիստ,
Այլ կենդանութիւն, լոյս, խաղաղ հանգիստ։
Քո չարչարանքին պատկեր, մի նշան
Ընդդէմ երկիւղի է յատուկ վահան։
Էլ ի՞նչից պիտի ես երկիւղ կրեմ
Եւ ի՞նչ մահերից պիտի զարհուրեմ
Երբ Դո՛ւ՝ իմ Փրկիչ, յաղթեցիր մահին
Եւ պարգևեցիր ինձ կեանք յանկարին։

VI.

Ո՛վ աղբիւր անհատ ամէն բարութեան
Եւ խաղաղութեան Բաշխող յաւիտեան,

Խեղճ եմ՝ ես հոգւով և մերկ բընաւին,
Ցեանկ եմ՝ աղքատ ես քո առաջին,
Հիւանդ եմ՝ տկար, տխուր և վշտատ,
Արդիւնքս է միայն պատիժ խորխորատ.
Բայց Դու աշխարհի Տէր աղատարար,
Թափեցիր արիւն մեր ողջի համար.
Ամէն, այս քո շնորհքից տուր և ինձ բաժան,
Արա ինձ խեղճիս քոյ սէրին արժան,
Որ այս լինի իմ՝ մեղքիս սրբարան,
Ամէն փորձանքից իմ պատսպարան։

VII.

Ով դառնդ անմահ, որ ինքդ յօժար
Պատարագ եղեր աշխարհի համար,
Որ մեր մեղքերի պատճառաւ՝ կամայ
Տարեր վատ պատիժ՝ մահ փայտի վերայ,
Անմեղ, անարատ, հեզ և անմեղունչ,
Քեզ պատժողներից բընաւ անարատունջ։
Աշխարհի տուիր քո մահով փրկանք,
Քո չարչարանքով կեանք մխիթարանք՝
Աշխարհս դին է քո թափած արիւնի,
Նա քեզ միայն իւր Տէր, Փրկիչ ունի։
Տուր և ինձ բաժին քո չարչարանքից,
Սաքրիր իմ սիրտը, լուացիր մեղքից
Ընդունիր ինձ քեզ սեպհական վաստակ
Տուր հոգւոյս հանգիստ՝ մահիդ յիշատակ։

VIII.

Դեպ՝ ի քեզ Տէր իմ՝ Աստուած Եհովահ,
Դիմումիս հոգիս աղօթել վստահ,

Օրհնել, գոհանալ, տալ փառք, գովութիւն,
Քեզ Ամենակալիդ երկրպագութիւն.
Բայց չունիմ հընար՝ — Քեզնից զօրութիւն
Փառաւորել քո անվերջ մեծութիւն։

Ուստի տուր ինձ քո այս շնորհ վերին,
Բարձրանան երգերս դէպ 'ի Քեզ յերկին։
Տա՛ր ինձ մօտ Որդւոյդ, Աստուած բարերար,
Նա քո և իմ մէջ միջնորդ, հաշտարար,
Նա ինձ կ'բերէ դէպ 'ի Քեզ՝ իմ Տէր,
Եւ կ'արժանացնէ դթոյդ մարդասէր։

Շնչիր հոգումս Քեզ բնակարան — տաճար,
Աժի՛ր սրտիս մէջ քո լոյս փրկարար։
Տուր խաղաղութիւնդ և ինձ ճաշակել,
Եւ այս քո պարգև միշտ և անարգել
Վայելելով ես առատ Աղբերդ,
Օրհնեմ և գովեմ Քեզ՝ Արարչապե՛տ։

Քո առաջին իմ բարեխօս՝ Հոգիդ,
Հառաչումէ միշտ ինձ համար մօտիդ.
Եւ արտասուքով, սրտով հպատակ
Տանումէ իւր հետ ինձ քո ոտքի տակ.
Եւ եկեղեցին, ինչպէս իմ սուրբ մայր,
Պատուիրումէ ինձ գոչել Քեզ իմ Հայր։

IX.

Ա՜խ, ո՞ւր թաք կենամ երկնքի տակին,
Ո՞ւր, ի՞նչպէս պտտեմ ես ինձ փրկութիւն.
Կարող է գտնել իմ թշուառ հոգին
Իւր ծանր ցաւին ճար, բժշկութիւն։
Չկայ ո՞չ ուստեք հընար օգնութեան
Ո՞ւր է մեղքերի, տանջանքի վախճան,

Ո՞ւր ազատութեան և կեանքի ճամպան
Միայն քեզանում՝ Տէր՝ այժմ, միշտ, յապայն։
Ո՛վ Քրիստոս՝ իմ յոյս, լսէր մաղթանքիս —
Ես խոցոտուած եմ վերքերով մեղքի,
Կ'իլնե՞ վերջ այս իմ սաստիկ հարուածքիս,
Ե՞րբ կ'իլնի ազատ առողջ իմ հոգի։
Ո՛վ յաւիտենից Որդի սուրբ Աստուած,
Քեզ եմ յոյս կապած, Դու իմ ապաւէն,
Դէպ 'ի քեզ են իմ աղերս և հայցուած,
Դու Փրկիչ միայն, իմ ճար համօրէն։
Աղքատ եմ, թշուառ, մեղապարտ և չար,
Հոգիս անդգայ, սիրտս քարեղէն.
Բայց Դու հաճեցիր, Տէր իմ, գալ աշխարհ,
Որ վառես մեր մէջ քո սէր բոցեղէն.
Ինքդ կակղացուր իմ կամք, իմ հոգի,
Հաստատիր սրտումն քո երկիւղ և յոյս,
Տուր ինձ արտասուք ապաշխարանքի,
Բժշկիր մեղքի ցաւեր վշտալոյս։
Քո վերքեր, տանջանք, քո մահ հրաշապէս
Հանգիստ, մխիթարանք և ազատութիւն
Տալիս են միշտ մեզ, նրանցով այլ և ես
Կ'գտնեմ մեղքիցս դեղ ու փրկութիւն։
Արիւնով դառին կենսատու շնորհ
Կարօղ է լուանալ իմ մեղքեր հին, նոր,
Տալ ցաւիս հընար մխիթարութեան,
Արժանի անել ինձ որդեգրութեան։

X.

Տէր, անչափ է քո սէր, համբերութիւն,
Տուր սրտիս հանգիստ և մխիթարանք.

Զունիմ աշխարհումն խաղաղ կեցութիւն՝
Մինչ չ'տայ քո սէր ինձ այս վայելչանք։
Հեռանալով քո քաղցր հրամանին՝
Ես բեռնաւորուած ծանր մեղքերով,
Աղաչեմ, Փրկիչ, Տէր, յոյս ամենին,
Մի թողեր տանջուիլ ինձ այս ցաւերով։
Դու միայն կարես՝ բեռն իմ յանցանքին
Թեթեւացնելոյ, տալ ինձ զօրութիւն,
Տանել քաղցր լոյծ քո պատուիրանքին,
Գտնել յաւիտեան միխիթարութիւն։
Միայն մի տեսիլ հոգւոյս պակերիդ,
Թէ արժանացնես այս երանութեան՝
Կ'տայ ինձ հնորհ՝ վայելել բարիդ —
Ցաւալի սրտիս հանդիստ խնդութեան։

XI.

Տէր, ո՞վ եմ ես, ի՞նչ, ո՞ւր ոդն անպիտան։
Բայց տուր ինձ հնորհք, օգնիր արկարիս։
Ուրիշ ինչ ինձ պէտք՝ ես հնչին խոտան
Կ'կենեմ իսկ զօրեղ, մեծ մէջ աշխարհիս։
Մի՛ թողեր Տէր իմ՝ Աստուած դիտաստաս,
Ցաւոտ եմ, ագքատ, անճար և անհոդ,
Փարատիր ցաւերս, իմ հոդւոյ արատ,
Դու ես իմ յոյս, տէր, և բնաւ ոչ ոք։

XII.

Եթէ իմ հոգին քեզ չի ճանաչէր
Եւ չ'բողոքէր արիւնդ մեզ համար,
Դեպ 'ի ո՞վ թշուառս դիմել կարող էր
Իւր մաղթանքներով՝ սրտին յայտարար։

Առանց օգնութեան կ'իջներ մեզ կորուստ,
Բայց Դու, Տէր՝ սիրես մարդկան ազգ սրտանց,
Դու մեր փրկութիւն, մեր կեանք, մեր ապրուստ.
Քեզնով կունենամ և ես կեանք անանց։

XIII.

Անպատմելի է վիճակ թշուառիս,
Բայց Դու, Տէր՝ կարես օգնել աղքատիս.
Անտանելի են իմ ապրուստ, քան, նեխտ,
Քեզնից կ'իջնին ինձ թողութիւն, հանդիստ։
Տուր խաղաղութիւն իմ կոտրած սրտին,
Որ հանեմ ես իմ ցանկալի ուխտին,
Մոռանամ ցաւերս, և խաղաղ, ուրախ
Զ'քաշեմ բընաւ կսկիծ, ահ ու սխ։

XIV.

Է՛ս եմ Տէր Աստուած քո, ով մարդ թշուառ,
Է՛ս եմ, հաւատա՛, ցաւիդ միայն ճար.
Միայն ստեղծող քո յոյս, լոյս պայծառ,
Ես միայն քո կեանք, հանդիստ խաղաղաբար։
Դու խոստովանիր քո վիճակ աղքատ,
Քո մեղքեր, ցաւեր, քո դրութիւն խաւար,
Հաւատա՛ յոյսով, սէրով անընդհատ
Փրկչիդ, նա կ'տայ փրկութեան հրնար։
Է՛ս եմ Տէր Աստուած քո, մարդ մեղսածին,
Ես միայն կարող, կամեցող, պատրաստ
Մաքրել քո հոգում մեղք նախաստեղծին,
Տալ ձեռն օգնութեան՝ ազատման նըպաստ։
Է՛կ իմ ետեւէս, սրտով խոնարհ, հեզ,
Ընդունիր յոժար, տար իմ խաչն ուսիդ,

Կ'գտնես նրանով փրկութիւն, կեանք քեզ,
Եւ մխիթարանք, կատարումն յոյսիդ։
Այս եմ Տէր Աստուած քո, մարդ տրամալի,
Ես քո օգնական, առաջնորդ բարի։
Իմ խաչն է դժուար՝ և անտանելի,
Որ համբերութիւն չ'ունի, չէ արի։
Բայց իմ բարութիւն, շնորհ չեն հեռի,
Թէ դու պահպանես պատուիրած քեզ ձև,
Հեշտ կ'իջնի միշտ քո ծանրութիւն բեռի
Իմ լուծով բարի, քաղցր և թեթև։
Այ՛ս եմ Տէր Աստուած քո, մարդ ցաւագար,
Ես ճարտար բժիշկ, ես հաց երկնային.
Ես քո փրկութիւն, միջնորդ հաշտարար
Տէր եմ երկնքի, բոլոր աշխարհին,
Դու իմ բարութեան, շնորհիս փոխանակ
Պիտի տաս միշտ ինձ՝ քո պարտք գոհութեան
Եւ վայելչանքով դրախտի գոհունակ՝
Կ'երգես օրհնութիւն Տէրիդ յաւիտեան,

XV.

Օրհասին իմ, Տէր՝ Դու ես տնօրինող,
Քեզ իմ յոյս կապել, ստեղծող, կառավար.
Լեր ինքդ առաջնորդ ինձ և պաշտպանող,
Որ ես առանց քեզ չ'կորչեմ իսպառ։
Թէ ուրախ, տրտում, թէ՛ առողջ հիւանդ,
Քո կամքին միշտ ես կ'իջնիմ հընազանդ։
Երբ մտածումիմ կարգով ողջ շրջան
Իմ մինչև այսօր անցած օրերին,
Միտքս են գալիս ամէնի նրշան,—
Ամէն իմ տեսած փորձեր քո սէրին

Հոգիս զարմացած այս քո շնորհքով
Օրհնումէ քեզ իւր գոհութեան տուրքով։
Ինձ այսուհետև պէտք է պատուել
Միմիայն քեզնում քրիստոս ինձ հանդիսատ.
Չ'են կարող էլ իմ սիրտը պատռոտել
Իմ կեանքի ցաւեր, վատ փորձանք, անցք խիստ.
Դու Աստուած՝ իմ կեանք, Դու իմ փրկութիւն,
Դու տաս բարութիւն, Դու մեզ օրհնութիւն։

XVI.

Ե՛կ մխիթարող Հոգիդ սուրբ Աստուած,
Եւ տիրապետիր սրտիս անխնայ,
Վառիր լոյս մտքումս բընաւ խաւարած.
Ցոյց տուր ինձ օրէնք քո իմաստութեան
Տուր շնորհ ճանաչել իմ ստեղծողին,
Սիրել միշտ Նրան՝ նախ ինձ սիրողին։
Ցրիր մեղքերիս մթութեան մրուալ,
Ծագիր հոգւոյս մէջ քո լոյս մշտափայլ.
Դու ես արեգակն ճշմարիտ արդար,
Դու լոյս գիտութեան, իմ բժիշկ ճարտար.
Տաքացուր սիրով իմ միտք, իմ հոգին
Տուր դէպ 'ի Փրկիչս սէր եռանդագին։
Հոգի՛ մխիթարող, Դու ես միմիայն
Իմ մխիթարանք, խնդութիւն համայն.
Որդին սուրբ Աստուած տալիսէ քեզնով
Ցաւիս փարատումն, ինձ հանդիսատ անխոով,
Ծագումէ սրտիս յոյս, սէր ջերմեռանդ,
Եւ սուրբ հաւատի մշտավառ եռանդ։
Տուր ինձ սիրտ մաքուր և հոգի արդար
Քո անճառ գթով, Հոգի՛ սրբարար.

Զորացուր իմ կամք, թոյլ եմ ես տրկար,
Տիրիր իմ հոգւոյն դու միշտ անդադար.
Սովրեցուր՝ լինիմ բարի, հեզ, խոնարհ,
Եւ երանութեան ցոյց տուր ճանապարհ։

XVII.

Տէր, Դու ես ուխտիս կատարող, իմ յոյս,
Դու միայն հրզօր ոգի իմ հոգւոյս։
Ո՞ր վըհատ, տխուր, տրկար, սրտաբէկ
Գըտաւ բաց 'ի քէն օգնութիւն ուստէք.
Ո՞վ քեզ կ'յուսայ, չ'ի քաշել ամօթ,
Ո՞վ քեզ աղօթէ, իւր սրտին ցաւոտ
Կ'գանէ դարման և խաղաղութիւն,
Փառաց վայելչանք, միշտ երանութիւն։

XVIII.

Տէր մանուկ եմ ես խեղճ, թոյլ, ադքատիկ,
Ուստի՞ կարող եմ զօրութիւն գտնել.
Ես ցանկանումեմ լինիլ երջանիկ,
Չ'գիտեմ ի՞նչպէս, ուր սկիզբն անել։
Դու սերիցդ դէպ իմ քո ստեղծած հոգին
Եւ ինքդ մանուկ լինիլ կամեցիր,
Դու և քո անմեղ արիւնով անգին
Մեղքի մահից ինձ միշտ ազատեցիր։
Ասա, քեզ ի՞նչպէս լինիմ պատարագ,
Որ երջանկութիւն կարենամ ճարել.
Քո շարչարանքին ի՞նչ ես փոխանակ
Կարող եմ կեանքումս գտնել, զոհ բերել։
Ահա սիրտս, Աստուած՝ պատրաստ առաջիդ,
Ընդունել հաճիր, նա քեզ է պատկան.

Գիտեմ՝ ողջ ես ինքս վաստակ իմ Փրկչեդ,
Ամէն ինչ ունիմ՝ քեզ է սեպհական։

Եւ միրտուելուց Դու ինձ հաղցրիր
Քո արդարութեան հագուստ ցանկալին,
Եւ ինձ անխօսիս խառնել հաճեցիր
Հետ դերդաստանի քո զաւակներին։

Ինքդ հոգւով և ջրով մաքրեցիր
Իմ հոգիս ամէն ապականական մեղքից.
Դու և ազատիր, նրան պահպանիր
Ներքին թշնամւոյն վնասից, փորձանքից։

Եւ թէ սահմանած է քեզնից երկայն
Ինձ այս աշխարհումս ունել կեցութիւն,
Խնդրեմ՝ կատարիր աղաչանքս միայն՝
Լինիմ՝ այլ և ես քո ուրախութիւն։

Ընծանի արա՝ աւանդ քո սէրին
Պահպանեմ սուրբ միշտ մինչև վերջ կեանքին.
Ցեռոյ հասիր Դու թել իմ օրերին,
Ընդունիր և տար քեզ հետ իմ հոգին։

XIX.

Դու՝ ոչ արտասուք և ոչ իսկ արիւն
Չի խնայեցեր, Փրկիչ, ինձ համար.
Ո՛հ, եթէ կըրակ քո սէրին սիրուն
Վառուէր, բորբոքուէր սրտումս անդադար։

Ո՛հ, եթէ պատկեր քո չարչարանքին,
Վէրքերի մահուան քո վերայ խաչին,
Մընար միշտ անջինջ մինչև վերջ կեանքին
Ցրպաւորված իմ խեղճ հոգւոյս միջին։

XX.

Իմ Փրկիչ Աստուած, հաճիր հետս լինել,
Տուր ուրախ հոգւով միշտ քեզ հետևել.
Արժանի արա՛ քեզ հետ միասին
Ինձ մտնել խաղաղ քո աշխարհ վերին։

Օգնե՛ ինձ դէպ լինին վշտալի օրեր,
Պահիր, ամրացուր, զօրացուր ինձ, Տէր,
Տուր ինձ համբերել ամէն փորձանքին,
Լինիլ հընազանդ միշտ քո սուրբ կամքին։

Այս կեանքիս ցաւեր, տանջանք, արտասուք,
Բացումեն, ճանապահ դէպ 'ի քեզ անսուզ։
Ես շարչարուելուց իմ մասին հոգւով,
Կամ մերձաւորիս տխրութեան անդրով։

Տուր ամէն անգամ ինձ համբերութիւն,
Տանեմ անտրտունջ բոլոր փորձութիւն —
Թող պարզ, անդադար աչքիս առաջին
Ցեսնեմ օր մահիս՝ իմ կեանքի վերջին։

Ինքդ, Տէր, կարգիր մահացուիս վիճակ.
Բեռը այս կեանքիս ծանր է և խառնակ,
Քաղցր է հայրենիք՝ մեր կեանք յաւիտեան,
Բաց այն տեղ և ինձ դուռն հանգստեան։

XXI.

Երբ ես նայումեմ դէպ երկինք 'ի վեր
Դէպ 'ի քո անչափ բարձրութիւն, իմ Տէր,
Անհուն մեծութիւն, քո փառք, սրբութիւն
Ցալիս են տեղ չափել խորութիւն
Կամայ ակամայ իմ գործած մեղքին։
Բայց երբ ցաւալի իմ սիրտ, իմ հոգին

Զգումն այս դառն վիճակ տխրապատ՝
Եւ երբ պատրաստ են լինել յուսահատ,
Իմ Փրկիչ Որդիդ, որ տուիր պատարագ
Քաւելոյ մեր մեղք՝ հանելումէ արագ,
Պնդում, զօրացնում իմ վըհատ հոգին,
Տալով ինձ հանգիստ, խնդութիւն կրկին։

XXII.

Տէր, ահա հոգիս պատրաստ, հընազանդ,
Միայն բաց արա իմ ականջք, աչքեր —
Լսել պատուիրանքդ սրտանց, ջերմեռանդ,
Տեսնել երկնային քո լոյս շնորհաբեր։
Մայուր հոգւոյս մէջ քո բան գիտութեան,
Որ նրանում՝ տամ ես ցաւերս մոռացման։

Մնք ամենքս այս տեղ — ծնունդ ենք մոլութեան
Պատել է ողջիս մթութիւն մեղքի,
Մինչև վերնային լուսով յայտնութեան
Չլուսաւորէ մեզ քո սուրբ հոգի։
Ամէն գութ, շնորհ, պարգև բարութեան
Տուրք՝ են Տէր Փրկիչ, քո ողորմութեան։

Դու լոյս ես լուսից, Աստուած ճշմարիտ,
Միածին Որդի անմեղ հոգիդ
Ուղիղ հաւատով ճանաչել բարիդ
Դու միայն կարող ես տալ զօրութիւն։
Տէր, ընդունիր իմ աղերսանք, մաղթանք,
Տուր ինքդ քեզ ինձ միշտ մխիթարանք։

XXIII.

Ահա Հրեշտակաց դասեր օրհնութիւն
Երգումն Տերին տալիս գոհութիւն,

Որ շնորհեց երկրի իւր խաղաղութիւն
Եւ բոլոր մարդկան ազգին հաճութիւն։
Այսօր մեզ Փրկիչ ծնուեց, յայտնուեցաւ
Բեթղեհէմում Նոր արքայ իմացուաւ։
Ի՞նչ պատճառ քեզ, Տէր Փրկիչ, երկնքից
Բերեց վայր աշխարհ դառն, ցաւալից։
Ո՛հ, անճառ շնորհ, քո գութ, բարերար,
Շարժեց քեզ գալու երկիր մարդկաբար,
Մեղաւորներին փրկել յանցանքից,
Եւ չարի ձեռքից՝ դժոխքի տանջանքից,
Դու եկիր գտնել մոլորուածներին
Ազատել ամէն վաստակածներին,
Տալ մխիթարանք, հանդիստ, խնդութիւն,
Որոց յաղթել էր մեղքի ծանրութիւն։
Դու մեր Տէր, և Հայր, պաշտպան՝ ապաւէն,
Երկնային Արքայ, քեզ փառք միշտ, ամէն։

XXIV.

Ուրախ կաց, ուրախ, Տիրամայր օրհնուած,
Ուրախ կաց, քեզ հետ է Տէր մեր Աստուած.
Քեզ հետ է Նորա յաւիտեան շնորհ։
Միշտ ուրախ հոգւով քեզ մարդիկ բոլոր
Ազդէ ազգ անվերջ կ՝փառաւորեն,
Մայր Աստուծոյ քեզ կ՝տօնեն, օրհնեն։
Ուրախ կաց, անծիր Աստուծով ընտրած
Ուրախ կաց, քեզնից Ծընաւ մեզ Աստուած.
Քեզնով այս աշխարհ եկաւ անմեղ Գառն՝
Որ իւր արիւնով մաքրէ մեր մեղք դառն։
Բիւր բիւր հազարներ քեզ են միշտ օրհնում,
Անունդդ գովում և փառաւորում։

Պարմնացաւ Աստուած, քաշեց մեր տանջանք,
Ցաւով Դու տեսեր Որդւոյդ չարչարանք,
Նրա վերք, կսկիծ, մահին դառնութիւն։
Ուրախ կաց, Նրրա մահն է փրկութիւն
Աշխարհի համար, և Նրա յարութիւն
Փառք է յաւիտեան քեզ երանութիւն։

XXV.

Պարդ մահկանացու, միտդ ես բերում՝
Աստուծոյ Որդին պահուեց մուրում.
Ո՛հ, ինչ մեծ հրաշք է Արարիչն Աստուած,
Նա որ մի խօսքով ամէն ստեղծուած,
Երկինք և երկիր ստեղծեց ոչնչից՝
Ցօժարուեց ցած գալ իւր բարձրութենից,
Եւ մարմին առած՝ մանուկ անխընամք,
Աղքատ մուրում կենալ արեց կամք։
Նա չքաւոր էր, բայց և Նա տուաւ
Մեզ հարստութիւն անվերջ և անբաւ։
Նա ցաւեր քաշեց, Նրա չարչարանք
Բերին մեզ համար հոգւոյ վայելչանք։
Ամենահզօրն — էր նուազ, տրկար,
Մեծն ամենողորմ — էր նուաստ, խոնարհ,
Որ արարածոցս մեր թոյլ բընութիւն
Բարձրացնէ և տայ փառք և զօրութիւն։
Դիմիր դէպ 'ի Նա դու յուսով հաստատ,
Նա ցաւիդ կ'տայ դեղ, հանգիստ անհատ.
Նա է քաղցրութիւն, Նա ուրախութիւն,
Նա անհամեմատ մեր հարստութիւն
Ջանք արա Նրան մօտեցնել սրտիդ,
Եւ իսկոյն, երբ Դու հասնես խորհրդիդ,

Թողէր աշխարհիս ամէն վայելչանք,
Կ'գտնես Նրանով միշտ մխիթարանք։

XXVI.

Սիրենք, Քրիստոնեայք, մեր Տէրին հոգւով,
Նախ Նա ինքն մեզ սիրեց իւր Որդւով.
Մէք Նրա անգին սէրին փոխարէն
Ցուինք հաւատացումն գործքով անօրէն։
Նա միշտ եղել է մեզ հաւատարիմ,
Բայց մէք ապերախտ, չար անմտերիմ.
Նա առանց խնդրի, առանց մեր կամքին
Հաճեց ուղարկել իւր միածին Որդին,
Որ եկաւ սրբել մեր հոգին մեղքից,
Սատանի ձեռքից, պատժից, դժոխքից։
Նա մեր ցաւակից՝ դէպ 'ի մեզ սէրից
Գգուեց փայփայեց մեզ աւել մօրից.
Զարշարուեց, թափեց մեզ համար արիւն,
Բաշխեց մեզ հանդիսաւ, բախտ, ազատութիւն.
Եւ այս մեծ, անգին շնորհի փոխարէն
Իւր մահով փրկած մարդկային ազգէն
Նա կամենում հաւատացման նուէր
Դէպ 'ի Նա միայն անկեղծ սրտանց սէր։

XXVII.

Տէր Դու ինքդ մեր տեսեր արտմութիւն,
Մեր ցաւ, տառապանք և տնանկութիւն,
Եւ խղճալով մեր դառն վիճակին,
Ինքդ հաճեցիր սէրովդ կաթոգին՝
Փրկելու համար, իջնել այս աշխարհ,
Ուր և փորձեցեր շատ ցաւեր դժուար։

Դու զնով քո սուրբ, անմեղ արիւնին
Հատուցեր պարտքեր մեր ամենեին։
Մեր մեղքի համար տանջանք քաշեցիր,
Եւ խաչի վերայ մահ ճաշակեցիր։
Ա՛խ, տուր և ինձ, Տէր՝ շնորհ կարենալ՝
Համբերել միշտ և քեզնից զոհանալ,
Թշնամիքներիս ցանկալ բարութիւն,
Եւ իմ մեղքերիս խնդրել թողութիւն։

XXVIII.

Վա՛յ ձեզն, որ մեղքիս համար բեւեռուեց՝
Երկնքից ինձ Տէր, շնորհեց քաւութիւն։
Հոգիս կապանքից արձակեց, փրկեց,
Տուաւ նրան հանգիստ, կեանք, ուրախութիւն։
Զոհացիր, հոգիս, Փրկչից բարերար,
Երգիր սրտեռանդն տաղեր օրհնութեան։
Նրա սէր, շնորհ և մահ հաշտարար
Պաշտիր և գովիր միշտ և յաւիտեան։

XXIX.

Ո՛հ, երանի թէ՝ ամէն շունչ կուրծքիս,
Ամէն մի թառանչ, զարկէին սրտիս՝
Իմ Փրկիչ, Աստուած, իմ կենդանութիւն,
Զայնէին քեզ փառք, պատիւ զոհութիւն։
Դու Գառն երկնային, արիւնդ անարատ,
Լուացար մեղքեր, մեր բոլոր արատ։
Դու բարեկամ մեր — մեր պարտքի համար
Կամաւ քաշեցիր պատիժ չարաչար։
Դու խաչի վերայ ցաւով դառնագէտ,
Տուիր փրկութեան մեզ յոյս միշտ յաւէտ։

Քո չարչարանքով — հանգիստ, խնդութիւն,
Մահվդ — անվախճան բարեբաղդութիւն։

Ստեղծածիդ համար, Տէր, տարիր տանջանք,
Որ մահվդ Ս՝ բանց յաւիտեան տաս կեանք.
Իմ խօսք, իմ լեզու բնաւ չեն զօրում
Պատմել դէպ 'ի մեզ քո սէր անպատում։

Ընդունել հաճիր, Արարիչ իմ Տէր,
Այս կեանքումս իմ թոյլ գոհութեան երգեր.
Միւսում անվերջ կեանք կ'իջնի իմ սեղան
Սէրի, օրհնութեան՝ միշտ քեզ փառաբան։

XXX.

Ո՛հ, բաղդաւոր եմ։ Ես այժմ ազատուած
Ամէն մեղքերից, կապից արձակուած
Գտի ինձ հանգիստ, և ուխտիս հասի
Շնորհալի գութով մահին քրիստոսի՝ —
Այն իմ յաւիտեան յոյս, կեանք բովանդակ.
Ես Ս՝ ընա արիւնի վաստակ, միշտատակ։

Ս՝նա է իմ հովիւ։ Ս՝նա տայ իմ հոգուն
Իւր անմահ բաժակ և հաց կենսատուն.
Տանումէ իւր հետ ինձ պարարտ արօր,
Զունիմ էլ երկիւղ դէպքերից ցաւոտ —
Ս՝նա կ'պահպանէ ինձ միշտ փորձանքից,
Ս՝նա է իմ պաշտպան, քաւարան մեղքից։

Ուրախ եմ յուսով։ Կեանքս է վերջանում.
Ճանապաս է դէպ 'ի հանգիստ անտրտում,
Դէպ 'ի Տէր Փրկիչս — կ'ելնեմ ես արժան
Տեսնել երկնային անվերջ փառք Ս՝ բան,
Եւ կ'վայելեմ միշտ խաղաղութիւն,
Այն տեղ, ուր չկայ ոչինչ խռովութիւն։

Ես չեմ մեռնելու, պիտի յաւիտեան
Ապրեմ, և օրհնեմ գիւտ քո յաղթութեան։
Ես հաւատումեմ, չեմ դալ դատաստան,
Դու աւերեցեր խայթոց իմ մահուան։
Իմ սկիզբն անվերջ — քո մահու բաժակ,
Ինձ նոր կեանք շնորհեց քո խաչեն վաստակ։

XXXI.

Տուր ինձ զօրութիւն, Փրկիչ գթառատ,
Պահել սուրբ հաւատ անխառն, անարատ,
Որ դալոց կեանքում լինիմ ես արժան
Արքոց հետ մտնել քո բընակարան,
Ուր Դու քո անբաւ, անսահման գութով
Տալիս ես Երանց կեանք միշտ անխոով։
Ուր և ես կ'գամ թռչելով վերև
Երկրից, հաւատիս թևերով թեթև։
Ծարաւ եմ քեզ հետ, Տէր, միշտ միանալ
Եւ ոչ մի վայրկեան քեզնից հեռանալ,
Որ սուրբ լինին իմ միտք բոլորովին,
Քեզ միայն պատկանին իմ սիրտ իմ հոգին։
Երկիւղ, ցաւ, նեղութեան միջին,
Մխիթարութիւնս Դու ես առաջին։
Դու իմ յոյս, հանգիստ, վայելման խրախճան
Այժմ և յետոյ անանց, անխախճան։

XXXII.

Բանն Աստուած առաւ մարմին, չարչարուեց,
Խաչի վերայ իւր սուրբ արիւնն թափեց,
Մեռաւ, մտաւ հող փրկութեան համար
Ադամայ որդւոց մեղքից անհամար։

Կարեմ գնահատել, ով մարդ դու թշուառ,
Փրկչեդ այս սերը, այս խորհուրդ անճառ։
Դու և այս անդին շնորհիս բաժանորդ՝
Ի՞նչ ունիս տալու Տերիդ փոխանորդ։
Ո՛հ, հաւատացիր, յուսա և սիրիր,
Նբրան ջերմեռանդ աղօթքով օրհնիր.
Նա է քո Փրկիչ, նա քո Տեր, Աստուած
Նա և ստեղծեց բոլոր արարած։

XXXIII.

Թափեցէք աչքերս, դառն արտասուք,
Լացիր, սիրտս, պահիր նեղութեան քո սուգ.
Ի՞նչ յանցանք ուներ քո Փրկիչ, պաշտպան
Որ քաշեց տանջանք իբրև մարդասպան։
Ի՞նչ Դու աշխարհումս գործեցեր վատ, չար,
Ո՛վ ամենադութ Տեր իմ բարերար.
Ո՞յր Դու պատճառաւ և ո՞ր յանցանքին,
Տարեր ծանրութիւն դժուար կապանքին
Տուին քեզ հարուածք, թուք, մուր, թաղ փշի.
Դատեցին արժան ահաւոր պատժի,
Տուին շատ տանջանք, լեղն արբուցին
Եւ մահի փայտի վերայ խաչեցին։
Ո՛հ, զգումեմ, Տեր, զարհուրանք, խիստ ահ,
Որ այս չարչարանք, այս վիշտ քո և մահ
Ինձ համար էին, իմ մեղքին համար։
Ես եմ մեղաւոր, — Դու չարչարուեցար։
Շատ ունիմ յանցանք, ամէն չարութիւն,
Չ'կայ ինձնում բնաւ ոչինչ բարութիւն
Արժանի եմ ես պատժուել յաւիտեան,
Իմ մեղքիս համար ինձ բաժին, — գեհեան։

Ո՛հ, այս ինչ հրաշք, ինչ գործ բարերար՝
Հովիւն բարի, ոչխարի համար
Ինքն իրան ձգեց մէջ չարչարանքին.
Աստուած հատուցումն տայ մարդկան պարարքին։
Ո՛հ, այս սեր չ՝ունի ոչինչ չափ, սահման,
Հրաշք են այս ամէն՝ անտես անենման
Այս բարի հնարհ, գութ Աստուածային
Մեր մեղքի խեղքին անհաս են բնաւին։
Ա՛խ, ի՞նչ պիտի տամ քեզ, Դա՛ռն, փոխանակ՝
Որ ինքդ ինձ համար եղեր պատարագ։
Անպատմելի են այս տուրք քո հնարհի,
Դու պատուիրուիս միշտ գործել բարի։
Պատրաստ եմ՝ արժան արա ինձ հնարհիդ,
Ինձ զօրացնելու յոգիր Սուրբ Հոգիդ,
Տուր սերով միշտ ես մինչև գերեզման
Նայեմ քո խաչին՝ պատկերիդ Նշան.
Հաւատով, յուսով կամքիդ հընազանդ
Սուրբ պահեմ մինչ մահ քո կտակ՝ աւանդ,
Եւ քո չարչարանք պահեմ իմ հոգում
Մնքած անդին միշտ իմ բոլոր կեանքում։

XXXIV.

Աստուած, իմ փրկիչ, Դու միայն իմ յոյս,
Յաւիտենական տուր հանդիստ հոգւոյս։
Դու եկիր աշխարհ տալու քաւութիւն,
Մեղաւորներին կեանք, խաղաղութիւն։
Յաւիտեան փառքին Դու լոյս անխաւար
Մեզ սկզբից յոյս և փրկիչ արուար.
Ամենամաքուր առիր Դու մարմին,
Որ փրկես աշխարհ՝ սերունդ Ադամին։

Կեանք ես, բայց Դու ինքդ մահ ճաշակեցիր,
Արիւնովդ կեանքի մեզ դուռն բացեցիր.
Դու խաղաղութիւն, Դու մեր փրկութիւն,
Աստուծոյ հետ մեզ տուեր հաշտութիւն։

Գոթասիրա Աստուած, Տէր ես բարերար.
Դու թշնամութեան միշտ խաղաղարար։
Սիրտս անհամբեր ունի ջերմ փափագ
Խնդրելու քո գութ ընկնիլ ոտքիդ տակ։

Աստուած մեծ, հրաշք, Դու եղեր ծառայ,
Դու և խաչուելով սուրբ խաչն վերայ,
Յաղթեցիր իսպառ դժոխքի կապանքին,
Տուիր թողութիւն մեր մարդկան մեղքին։

Աւքա՛յ երկնային, իմ թշուառ հոգին
Արժանի՛ արա քո տիրող շնորհքին,
Որ կենդանանայ նա քո սուրբ սերով
Մաքրուի մեղքից շուտ քո արիւնով։

Դու հաւատարիմ բարեկա՛մ մարդկան,
Զարթեցո՛ւր հոգիս, տուր և ուղղական
Դէպ 'ի քեզ Ներշան՝ առանց վտանգի
Կատարէ շրջան աշխարհիս կեանքի։

Աստուա՛ծ, սուրբ Հոգի, միշտ ինձ հետ եղիր,
Աղօթքի եռանդ վա՛ռ սրտումն պահիր,
Եւ ամէն իմ խօսք, միտք, խորհուրդ և գործ
Մաքրիր միշտ լինիմ անսխալ, անփորձ։

Ծ՛ագիր հոգւոյս մէջ լոյս քո շնորհքին,
Տո՛ւր ինձ գիտութիւն, որ ես աշխարհքին
Սուտ փառք ու պատրանքն ճանաչեմ՝, ատեմ,
Սիրեմ՝ բարութիւն, և չարն խոտեմ։

Երբ դայ ժամանակ մահի խղճալոյս,
Ի՛նքդ ընդունիր, տո՛ւր հանգիստ հոգւոյս,

Տուր ինձ օթևան քեզ հետ միասին,
Փառակից սրբոց աջակողմ դասին։

XXXV.

Ա՛խ, Էր քեզ Քրիստոս՝ բարի վերագոյն
Ճանաչեցի ես ոչ յառաջագոյն,
Գտնելու բարին էր իմ աշխատանք,
Չիմացի, կորցրի զուր բոլոր իմ կեանք.
Իմ ամէն օրեր մինչ այսօր անցին
Խաւար և տխուր՝ վընաս իմ անձին։

Խաբեբայ, մոլոր ես կեանք անցուցի,
Ի՞նչ էի պտուում՝ ինքս չիմացի.
Կոյր էի, անմիտ, իմ ուղածս խնդրած
Ո՛չ Արարիչն էր, այլ Նրա արարած.
Բայց, Տէր իմ, Դու քո սէրով անսահման,
Ինձ գտնեցիր, և ես քոյն եմ յաւիտեան։

XXXVI.

Տէր, Դու կեանքիս լոյս, մահիս յարութիւն,
Իմ մեղքին համար թափեցիր արիւն.
Ես չար գործեցի, ես և պարտապան,
Դու իմ փոխանակ եղեր զոհ մահուան։

Տու ինձ՝ գողգոթայ երթել քո հետքով,
Ցաւակից սրտով, հոգւոյ մորմնքով
Տեսնել քո ամէն մահի չարչարանք,
Որոց պատճառն էր իմ միայն յանցանք։

Գեթսեմանիում մահի չափ տրտում
Արիւն տրտաստուք, անքուն աղօթքում
Քրտինք թափեցիր, և այս ողջ ցաւեր
Ինձ չարիս համար փորձեցեր՝ իմ Տէր։

Պատնեց ուրացողն հեթանոսներին
քեզ, և պատժելու դատաստան տարին.
Ես եմ յանցաւոր, ես պատժի արժան,
Դու իմ պատճառաւ մատնուեցար մահուան:
Դու մարդ՝ անմեղունչ հեզ գառնի նման
Աբքայ՝ թագ փշեց, եղէգն — գաւազան
Ձեռնիդ ծեծուեցիր: Իմ բնութիւն հպարտ
Պատճառ էր ցաւիդ, ես իսկ պատժապարտ:
Այս ծաղրածութիւն, քեզ չէր միայն ցաւ,
Միւս և աշակերտդ քեզ շուտ ուրացաւ.
Դու մենակ, անձամբ փայտն ուսիդ տարիր.
Իմ իսկ մեղքն էր, որ Դու նրանով բարձիր:
Քեզ տուած վշտեր, չարիք, անարգանք
Քո խաչի վերայ քաշած չարչարանք,
Եւ քո վերքերից թափուած սուրբ արիւն
Ցուին աշխարհի մեղքից քաւութիւն:
Քեզ տանջող, խաչող թշնամիներիդ,
Քեզ հաւատարիմ բարեկամներիդ
Չարչարանքի մէջ ներումն տուիր.
Ա՛խ, Փրկիչ Աստուած և ինձ ողորմիր:
Ես քեզ թշնամի էի հալածող,
Բայց Դու միշտ գթած, իմ մեղքին բարձող.
Գտաւ աւազակն քո գթով դրրախտ,
Ողորմիր և ինձ, տուր անանց այդ բախտ:
„Ո՛վ Աստուած, Աստուած, ընդէր ինձ թողեր,“
Դու ցաւերիդ մէջ բարձր ձայնեցիր.
Չլսեց ոք քեզ, և Հայր մնացար.
Ա՛խ, դա էլ էր իմ մեղքին պատճառաւ:
Դու անվերջ ազգիւր ամէն բարութեան,
Հասիր կարօտի և ծարաւութեան,

Տուին քեզ խմել քացախ և լեղին.
Փոխուեց դառնութիւն Նրանով իմ մեղքին։
Հասաւ ժամանակն՝ վերջ չարչարանքիդ,
Դու աւանդելով Հօր ձեռքն հոգիդ,
Կատարեցիր քո վաստակ հաշտութեան
Հօր հետ աշխարհիս միշտ և յաւիտեան։
Այսչափ աշխատանք, ցաւեր անհամար
Դու սէրով տարիր իմ մեղքին համար,
Քաշեցիր տանջանք, մահին դառնութիւն,
Որ տաս Նրանով միշտ ինձ փրկութիւն։
Վա՜յ ինձ... մեղաւորն մնաց անփորձ, կենդան,
Իսկ գառն անմեղ զոհ եղաւ մահուան,
Եւ իւր արիւնով տուաւ կեանք յաւէտ,
Հաշտեցնելով մեզ Հօր Աստուծոյ հետ։
Ո՛վ իմ Տէր, իմ սէր, իմ երանութիւն,
Քեզնով ես գտի միշտ կենդանութիւն.
Ցոյսս դէպ 'ի քեզ հաստատ հաւատով,
Քեզ եմ նուիրում ինձ՝ հոգւով, սրտով։
Վանի պանդուխտ եմ ես այս աշխարհում
Շնորհքով քո մահուան պիտի իմ հոգում
Պահեմ անփոփոխ հաւատ, յոյս և սէր
Դէպ 'ի քեզ Փրկի՛չ՝ բարերար իմ Տէր։
Իսկ երբ կ'լրանայ իմ կեանքի շրջան
Կ'գայ ժամանակ իմ վերափոխման,
Նա և երկնքում քեզ՝ իմ ապաւէն,
Կ'երգէ գոհութիւն յաւիտեան, ամէն։

XXXVII.

Սիրտ իմ, վառ սէրով միշտ և անդադար
Պատուիր, մեծարիր և մի՛ մոռանար

Երկնային Գառին տանջանք ու վատակ,
Մահին յիշատակ։
Յիշեր և ցաւեր, որ քեզ փրկութիւն
Տալու համար Նա թափեց իւր արիւն.
Օրհներ, գոհացեր այս հրաշքիս համար,
Մեղքից սրբարար։
Ո՛հ, ցէր իմ Փրկիչ, քո գութն է միայն
Իմ բաղդ, բարութիւն, Դու միանգամայն
Իմ յոյս, ապաւէն, և իմ կենարար,
Փառք քեզ բարերար։
Քո թափած քրտինք, քո քաշած ցաւեր,
Քո խաչն վերայ տանջանք ու վերքեր,
Իմ մեղքին համար քո արած մաղթանք,
Միշտ տուին ինձ կեանք։
Նշանք են հանդիսա, իմ երանութիւն,
Եւ այս հաւատով, յուսով հաստատուն
Պիտի ես մընամ իմ կեանքի վերջին,
Հանել քո վարձին։
Միայն ընդունիր իմ սրտանց աղերս,
Թեթեւացուր իմ աշխարհում ցաւերս՝
Տուր միխիթարանք, որ գութով յուսոյդ
Արժանամ տեսոյդ։
Երբ կհասնի իմ մահի ժամանակ,
Արա՛ իմ հոգին արժան, ընդունակ՝
Ոնիլ քո սրբոց դասում օթեւան,
Հանդիսա յաւիտեան։
Ո՛հ, ի՞նչ հրաշք կլինին այն օր, ժամ վերջին,
Երբ յանկարծ կ'դայ մեր դէմ առաջին
Կ'կանգնի Փրկիչ՝ Դատաւորն արդար,—
Մեր կեանք, միխիթար։

Քանի՛ քաղցրութիւն կիրնի երկնքում,
Մշանջենական մեր հայրենիքում,
Յետ այս աշխարհիս ցաւերին վատ, խիստ,
Գտնել միշտ հանդիստ։

Տէր դին եմ և ես թափած արիւնիդ,
Ցիշատակ զոհուած երկնային գառնիդ,
Արժանի՛ արա ինձ քեզ հետ լինել,
Քեզ գովել, օրհնել։

Դու խաղաղարար, Դու միայն Միջնորդ,
Դու մեր փրկութեան միայն Առաջնորդ,
Քեզ են և վայել երգեր գոհութեան,
Քեզ փառք յաւիտեան։

XXXVIII.

Դէպ ի՛ խաչ Փրկչին և այնոր վերայ
Սերով տարածած ձեռներն նորա
Փրկելու համար աշխարհ իւր գրկում,
Շտապիր իմ հոգի, շատերին շարքում՝
Նրա սուրբ արիւնով գտնել մաքրութիւն,
Քեզ և միշտ հանդիստ և ուրախութիւն։

Տէր, մեղ ողորմիր, արա՛ և արժան
Քո կենդանարար սերին անսահման,
Քեզ խաչած կրելու սրտում, ընդունակ,
Միշտ հաւատարիմ, Քեզնից զոհունակ,
Սիրել Քեզ սրտանց յուսով անսասան,
Քեզնով և յաղթել երկիւղն մահուան։

XXXIX.

Տո՛ւր, Փրկիչ, ինձ այս ցուրտ անապատում,
Ուր որբ և խեղճ եմ ցաւոք անպատում՝

Քո ձեռն օգնութեան, մխիթարութիւն,
Որ ես մուտանամ իմ սրտնեղութիւն։
Մահուան ցաւերի տանջանքի միջին,
Երբ գայ ջոկուելոյս ժամ հետ իմ կեանքին,
Տուր ինձ հայեցուած դէպ 'ի փրկութիւն,
Որ դընեց անդին, անմեղ Քո արիւն։

XL.

Այս թոյլ և անզօր արարած Քո, Տէր,
Ունիմ հոգանի ինձ միայն Քո սեր։
Երբ գայ մօտանայ ժամանակ վերջին
Կեանքի տխրութեան, տանջանքի միջին,
Եւ երբ իմ հոգումն՝ յետին բաժանման
Սկիզբն լինի կռուի հետ մահուան,
Տուր նրան զօրութիւն՝ և աղօտ արձակ
Լինիլ խնդութեամբ քեզ զոհ, պատարագ։

XLI.

Ինչպէս ծարաւի այծեամն դաշտում
Դէպ 'ի աղբիւրներ իւր վազն է պնդում,
Այնպէս փափագող, ծարաւ իմ հոգին
Սրտով ու մտքով իւր թռիչ ուժգին
Ուղղումն դէպ 'ի այն խաղաղութիւն,
Որ պիտի գտնեմ ինձ երանութիւն։
Ա՜խ, երբ կ'զմայլուի իմ վհատ հոգին
Տեսնելով պատկեր Քո քաղցրիկ անդին։
Ա՜խ, երբ կ'ցրուի իմ կեանքին խաւար,
Կ'գտնեմ հանդիստ, ցաւերիս դադար։
Իմ կերակուրն է միշտ դառն արտասուք,
Աշխարհիս վայելք ինձ ցաւ են և սուգ։

Հոգիս պատել են աղէտք, հառաչանք,
Չ'կան այս երկրում ինձ մխիթարանք։
Ո՞ւր է լուսեղէն, Տէր, իմ օթեւան,
Այն է հայրենիք իմ հանգստարան։
Այն տեղ բնակարան արդարոց դասին,
Ուր նրանք երգումեն միշտ փառք Ցիսուսին։
Մի՛ տրտմիր հոգիս, քո յոյսդ Աստուած
Կ'լսէ անշուշտ քո աղօթք, հայցուած։
Տխրութեան ջրեր, աղմուկ, փոթորիկ
Իմ գլխին վերայ գրգռումեն սաստիկ։
Սրտիս անձկութիւն չունի չափ, վախճան,
Դու միայն կարող, միայն օգնական։
Ընդունիր աղերս՝ ձայն հառաչանքիս,
Քո հրգոր ձեռօք տուր դառն աղէտքիս
Հրնար փրկութեան, ով Տէր իմ՝ Աստուած,
Մաշուեցան ոսկերքս կռուի մէջ յաղթուած
Եւ գլխիս վերայ անհաշտ թշնամիս
Մերկացրած ունի ահեղ սուր մահիս։
Ո՛հ ծանր, դժուար են սրտիս համար
Կատաղէ չարին տանջանք յաղթահար։
Ողջ կեանքս է մաշվում հալոցի մէջին,
Ո՞ւր է իմ լոյս, յոյս, էր պիտի տանջին
Չարաչար իմ կեանք, ո՞ւր է իմ Աստուած,
Երբ կ'կատարուի խոստումն ինձ տուած։
Մի՛ տրտմիր հոգիս, մի՛ բնաւ տրանջար,
Կ'գայ ժամանակ, փրկութեան քո ճար՝
Կ'գայ ինքն Տէր քեզ դէմ յանդիման,
Կ'գտնես հանգիստ ըստ անսուտ խոստման։

XLII.

Երբ որ տեսնումեմ ես ցաւակցաբար
Ինչպէս արեգակն կեանքիս ինձ համար
Վայր իջաւ խաչից, մնաւ յարևմուտ,
Ինչպէս Աստուած, մեր բժիշկ բարեգութ
Իւր վերայ առաւ մեր մեղք, մեր չարիք,
Տալով մեզ փրկանք, յաւիտեան բարիք·
Ապա սրտաբեկ, տխուր արտասուօք
Դառնումեմ դէպ 'ի Նա աղերսանօք,
Դու խաչեն վերայ դառն տանջանքում
Թշնամւոյդ համար էիր օգութքում,
Եւ ինձ տանջուողս մեղքերով հին, նոր
Մի թողեր կորչել, Տէր ամենազօր·
Մաքրիր և պահիր, որ և ինձ համար
Դու արտասուեցիր՝ Աստուած բարերար:

XLIII.

Եկէք և տեսէք, թէ մեր մեղք ինչպէս
Աստուծոյ Որդւոյն պատրաստեց հանդէս,
Ահա՛ Նրա ձեռներ, Նրա ոտք կապուած
Երեան մէջ, խաչեն վերայ բևեռած,
Ահա՛ Նրա սիրտն և կողն խոցոտած,
Ահա՛ և ճակատն փշից ծակոտուած:
Ո՞վ երանութիւնն կարող է արդեօք
Վրդովել երկրայ մտքով ու կարծեօք·
Ո՛չ, մեզ հաւատալ պէտք ճշմարիտ
Հաւատով, յուսով, լենիլ անսկիզիտ:
Թողենք յաւիտեան հանճարով դատմունք
Պարզ սրտի միայն տուած են խոստմունք:

Ո՛վ իւր մէջ տեսնէ յանդիմանաբար
Զարութիւն, յանցանք՝ անշուշտ նրա համար
Փրկութեան ճամբայ Աստուած կ'բանայ.
Ո՛վ ինքն ինքնին չկարողանայ
Որոնել, գտնել իրան փրկութիւն,
Օրհ Գառին նրան է բժշկութիւն։

Մենք ամենք ինքներս որդունք ենք չնչին,
Բայց Որդւոյն թափած արիւնին ենք դին.
Փրկուած նրանով մինչև յաւիտեան,
Պիտի կատարենք պարտք մեր գոհութեան՝
Օրհնենք և՝ գովենք նրան խոնարհ հոգւով
Եւ նրանում՝ կենանք անփոփոխ մտքով։

XLIV.

Ծագեց արեգակն վաղ առաւօտեան
Եւ Քրիստոս մեր Տէրն հրաշօրէն յարեաւ.
Որով հաւատաքք վերջին յարութեան
Բարեպաշտներին նա պարգև տուաւ։

Յարեաւ մեր Փրկիչն, և պատիժ անկման
Մեզ համար բնաւ էլ չէ սոսկալի.
Յարեաւ մեր Փրկիչն, և ճիւղ ազատման
Պարգևեց մեզ իւր զթով շնորհալի։

Յարեաւ մեր Փրկիչն, և մեզ անվերջ կեանք
Բաշխեց իւր կեանքով մինչ յօր յաւիտեան.
Ընդուներ մեզնից գոհութիւն, մաղթանք
Տէր Փրկիչ՝ Աստուած, մեր յոյս, մեր պաշտպան։

XLV.

Դու Տէր իմ՝ Աստուած, իմ՝ կեանքին ես յոյս,
Դու խաղաղութիւն, յարութիւն, իմ՝ յոյս.

Դու կենդանի ես, ես ազատ ահից,
Դու ինձ արիւնովդ փրկեցեր մահից,
Եւ տանում ես ինձ քո գթով անհուն
Դէպ 'ի անվերջ կեանք՝ հայրենիքն իմ՝ բուն։

Տէրին պատուիրանք սուրբ են և անդարձ,
Խաղաղութիւնն է հաւատին մեր վարձ,
Նա յարեաւ, Նա է մեր գլուխ, ուղղեցոյց,
Նա յաղթեց դժոխքին, մահից պրծեցոյց
Մեզ, որ իբր անդամք Նրա յաղթութեան
Վայելենք խաղաղ հանգիստ խնդութեան։

Տեսնում եմ՝ Փրկիչ, ես լոյս զուարճալի,
Եւ օրհնեալ պատկեր քո սուրբ, հրաշալի·
Այս տեսիլ Տէրիդ սրտիս և հոգւոյս
Տալիս են անչափ հրճուանք և խրախոյս,
Թէ քեզ հետ պիտի լինիմ ես անմահ,
Վարեմ՝ և միշտ կեանք անխռով, անահ։

XLVI.

Կենդանի է Տէր՝ Քրիստոս իմ՝ Փրկիչ՝
Լոյսն իմ՝ կեանքին, իմ՝ յոյս, պահպանիչ·
Ողբան և թշէ իմ՝ հոգւոյն համար
Մահ իւր մթութեամբ ահեղ, խռովարար,
Անսուտ են Տէրիս տուած պատուիրանք,
Նա կ'տայ և ինձ կեանք և վայելչանք։

Կենդանի է Տէր և ոչք հաւատան՝
Պիտի միասին Նրա հետ յաւիտեան
Նրան բաշխած կեանքով կենան ու խնդան,
Վայելեն հանգիստ միշտ անցաւ, կենդան,
Եւ ես իբր անդամ՝ դաւանող Նրան՝
Կ'մնանեմ Նրա սուրբ, անվերջ օթարան։

Միաւորուած եմ Նրա հետ պինդ կապով՝
Հաստատուն յուսով, սէրով, հաւատով։
Նա խլեց, ազատեց ինձ գերիս մահուան,
Նրա հետ եմ և ես՝ կցորդ անբաժան.
Երբ մահի քնով արտեւունքս խփեմ,
Չ'եմ մեռնել բընաւ, այլ պիտի ապրեմ։

Ո՛չ, նա չ'ի թողել երբէք իմ հոգին
Թաղուիլ և մընալ սև հողի տակին.
Իմ ոգին այս իւր հաւատով հաստատ
Ցեռ մահուան կ'օրհնէ Տէրիս անընդհատ.
Նոյնպէս և մարմինս մինչև օր վերջին
Կ'հանգչի անմահ տապանի մէջին։

Եւ որովայնում գէջ, խաւար հողին
Կ'մընայ ծածկեալ իմ մարմնի փոշին։
Բայց յարուցանել կ'գայ Նա մահից,
Էս կ'ելնեմ կենդան իմ գերեզմանից,
Եւ երանելի կ'մնանեմ հոգւով
Նրա հետ բնակարան սուրբ և ապահով։

Ով այս աշխարհումս ցաւօք է ապրում,
Երկնային կեանքին իւր յոյսն կապում՝
Նա երանութեան կ'տեսնէ աշխարհ։
Ամուսած գոյացոյց հողից արհամարհ,
Որ նրան յետ մահուան անէ երկնային,
Տայ հանգիստ և կեանք անվախճան, վերին։

Դէն ձգիր, հոգիս, տրտմութիւն քո, ախտ,
Հաւատա և կաց պատրաստ դէպ 'ի բախտ.
Հաւատա և քեզ երբ գայ վերջին օր՝
Կ'տայ քո Փրկիչ յարութիւն, կեանք նոր.
Կ'հընչէ Նրա փող աքանչելագոյն,
Կ'բացուին բոլոր գերեզմանք իսկոյն։

Կ՚ց զգոյշ, հեռի սրտի մտօք դու միշտ
Աշխարհիս ամէն գործքից ամպարիշտ,
Եւ քիզ գլխովին նուիրիր Տէրին,
Իբրև նպատակ քո բաղձանքներին,
Ցղէր քո սիրտ, միտք դէպ ՚ի Նա ՚ի վեր,
Ուր միշտ բնակութեան ունիս դու պատուէր։

XLVII.

Իմ բոլոր փափագս իմ Փրկիչ՝ Տէրն է,
Աստուած՝ խաչ հանած — իմ յոյս, իմ սէրն է.
Ա՛խ, երբ կ՚հասնեմ քեզ, երբ կ՚մընեմ
Քո սուրբ բնակարան — երկնային Եդեմ։
Երբ կ՚տեսնեմ քո վերքերի փայլուն,
Կ՚օրհնեմ ինձ մաքրող քո թափած արիւն,
Քո մահ հրաշափառ, քո սուրբ յարութիւն,
Որ տուին ինձ նոր կեանք, անվերջ բարութիւն։

XLVIII.

Ձեմ մոռանալ, Տէր, երբէք քո տանջանք,
Քեզնում միայն գտաւ հանգիստ իմ հոգին,
Քեզնով նա ունի միշտ մխիթարանք,
Սէրովդ է վառուած նա եռանդագին։
Հրաշք է բարութիւնդ, չկայ բաւական
Խօսքեր գովելու, տալու գոհութիւն։
Դու Աստուած կեանքի, ողջ ազգի մարդկան՝
Մահ ճաշակեցիր, որ տաս փրկութիւն.
Փոխանակ այս քո շնորհիդ անպատում,
Ես որդս հոգանիթ, թշուառ ու չնչին
Կօրհնեմ քեզ երբան իմ զօրս է պատում
Արմնով ու հոգւով մինչ իմ շունչ վերջին։

Քեզ, Հայր մեր հրզօր, Աստուած բարեխնամ,
Փառք և գոհութիւն բիւր բիւրիցս անգամ,
Քո կամքդ հաճեց Որդիդ մեզ համար
Քաշել խիստ տանջանք, ցաւեր անհամար
Գրնեց մեզ Փրկիչն Թանկագին գինով—
Իւր սուրբ կենարար անմեղ արիւնով
Մեք չարութենից, վտանգից ազատ
Շնորհիւ քո սերին, Հայր մեր գթառատ,
Պիտի յղենք քեզ միշտ՝ գիշեր և տիւ
Աղօթք, օրհնութիւն, գոհութիւն անթիւ։

XLIX.

Ա՜խ, երանի թէ ողջ կեանքիս ժամեր
Ես անց կացնէի սերով դէպ 'իմ Տէր,
Ամէն պարապմունք, իմ զբրոյց միայն
Նրա հետ լինէին միշտ միանգամայն։
Եւ թէ անդադար ես բոլոր սրտով
Աներկբայ յուսով, հաստատ հաւատով
Թէ տրտում՝ ուրախ՝ ամէն նուագում
Պահէի Նրան իմ մտքում, հոգում,
Եւ աղօթէի Նրա ոտքի տակին՝
Հասնելու վերջին իմ նպատակին։
Նա մարմին առաւ, քաշեց չարչարանք,
Անչափ նեղութիւնք, ցաւեր, անարգանք,
Զոհեց իւր կեանքն մեզքիս պատճառաւ,
Նա և ինձ համար խաչուեց և մեռաւ,
Գերեզմանի մէջ մընաց երեք օր,
Յարութիւն առաւ, տալով ինձ կեանք նոր,
Քաւութիւն մեզքիս, փրկութիւն հոգւոյս
Եւ որ միշտ լինէին՝ հաստատուն իմ յոյս,

Զօրեղ՝ իմ հաւատ, շուտ չըվերացաւ,
Ամէն քառասուն օր աշխարհումս կացաւ։
Փառք, պատիւ Նըրան։ Թէ և յետ այնոր
Թողեց այս հովտում մեզ մինչև այսօր,
Համբարձուեց երկինք, բաժանուեց մեզնից,
Բայց ընաւին և այժմ մեք չենք զուրկ Նրանից։
Մեք մեր դէպ 'ի Նա սերով, հաւատով
Մեզ բաշխած շնորհիւ, Նրա անչափ զթով
Գըտել ենք հանդիստ, խնդութիւն անանց,
Ընբաժանութեան պարգև գերազանց։
Նա աներևոյթ, հեռի մեզ համար,
Մեզ հետ է և մեք Նրա հետ անդադար։
Տէր, երբ անհամար երկնային զօրքով
Փայլակի նըման, հրաշափայլ փառքով
Ինչպէս խոստացար մեզ, կ'գաս կրկին,
Կ'երևես այս մեր աշխարհ նեղ, նեղբին
Քո խաղաղութիւն, հանդիստ յաւիտեան,
Կ'բանաս հզօր Տէրութեանդ ատեան՝
Դատել աղգ մարդկան, տալ Նրանց արժան
Կամ փառքի պըսակ, կամ պատիժ դաժան.
Օրհնեալ անաչառ Տէր՝ մեր ապաւէն,
Փառք քեզ այժմ և միշտ յաւիտեան. ամէն։

L.

Հիանդ եմ, ցաւս է ահեղ, անդարման,
Իմ աղքատութիւնն չունի չափ, սահման.
Բայց երանելի է հոգին աղքատ,
Ում Փրկիչ մեր Տէր իւր զթով առատ
Հաճի պարգևել մխիթարութիւն,
Եւ որ ստացաւ շնորհ, զօրութիւն,

Վառուիլ, բորբոքուիլ Նրա արիւնով,
Որ Աստուածային անսահման սէրով
Նա խաչին վերայ իւր կամքով յօժար
Թափեց մեզ մեղքից փրկելոյ համար։
Ո՛հ, սոսկալի են իմ հոգւոյ վէրքեր,
Չեմ դանում բնաւին բաւական խօսքեր
Պատմել, բացատրել իմ թշուառ դրութիւն,
Կարող են միայն քո շնորհ, զօրութիւն,
Ցէր իմ բարեգործ՝ բուժել իմ ցաւեր։
Ինչպէս հաճեցիր ինքդ տալ պատուէր,
Ահա՛ ես վաստակ և բեռնաւորուած,
. . . . . .
Դիմումեմ յուսով դէպ 'ի քեզ՝ իմ Ցէր,
Տո՛ւր թեթեւութիւն ցաւիս մահաբեր։
Գիւա եմ արիւնիդ անարատ, անգին,
Մինչև երբ պիտի տրտմէ իմ հոգին։
Դու ողորմեցիր և աւազակին,
Տուեր թողութիւն և կին պոռնկին,
Կոյրեր և կաղեր, մունջեր և միւս այլ
Ցաւոտներ տեսին քո գութ հրաշափայլ,
Քեզնով և մեռեալք առին յարութիւն.
Չունին վերջ, սահման քո շնորհ, բարութիւն,
Խընայիր և ինձ, Փրկիչ, ողորմիր,
Ինձ բժշկութիւն, քաւութիւն շնորհիր։

LI.

Մեք մեղաւոր ենք, որդիք բարկութեան,
Դու միայն դրթած, աղբիւր բարութեան,
Զոհ ենք մեք ամենքս մահի, դժոխքի,
Առանց քեզ ենք հող չնչին, փանաքի։

Պատուիրազանց ենք քո առաջին.
Ո՞վ է հաստատուն աշխարհիս մէջին
Արատաւոր ենք, պիղծ են մեր գործքեր,
Ի՞նչով մեզ մանքրենք, քաւենք մեր մեղքեր:
Դու գառն Աստուծոյ՝ անմեղ գոյութիւն,
Դու միայն մարդկան կեանք, արդարութիւն.
Տ՛ուր մեզ ամենիս քո խաչ, չարչարանք,
Փոխանակ հոգսի տանջանքով կենանք:
Լուացիր ամէն մեր արատ, յանցանք
Քո սուրբ արիւնով, որ է մեր պարծանք,
Մեր փառք, փրկութիւն, մեր երանութիւն,
Այս և միւս կեանքում մեր խաղաղութիւն:

LII.

Իմ հոգին ունի միայն այն փափաք,
Որ լինի կարող, արժան, ընդունակ
Տանելու իւր մէջ քո աթոռ՝ իմ Տէր:
Դու Նրրա համար երկնքից իջեր
Աշխարհ, քաշեցիր շատ տանջանք, ցաւեր,
Մեռաք, հոգի տակ՝ դերեզման մրտեր:
Շինիր իմ հոգումս քեզ բընակարան,
Որ այն քեզանով լինի սրբարան,
Մինչև գայ, հատնի վերջ կեանքիս ցաւոտ,
Երբ հաճես, Փրկիչ, տանել Նրան քեզ մօտ:

LIII.

„Աստուած զօրութեանց, դարձ Հայեաց յերկնից և տես· այց արա այգւոյս այսմիկ և դարմանն տար սմա՝ զոր տնկեաց աջ քո“։ Սաղմ·

(LIII — LVII յաւելուածք 'ի Բաքմանէ)

Տէր զօրութեանց, դարձ Հայեաց
Յերկնից և տես, այց արա
Այգւոյս, զոր աջ քո տնկեաց,
Դու միայն ես Տէր սորա։
Դարձ դթութեամբ, Հայեաց տես
Զգարդ այգւոյս այս Նախկին
Սա մինչ ցայսօր կայ անտես,
Կարօտ խնամոց մշակին։
Տես սա մընայ ամայի
Խամրեալ խոպառ 'ի խոպան,
Տես, զի չ'իք որ յայն Հայի,
Չ'իք հոգածու պահապան։
Սա, որ դրախտի Հանդիտակ
Երբեմն էր վայր վայելից,
Այժմ, աւաղ, բովանդակ
Տխուր անշուք, ձանրալից։
Սա՝ որ երբեմն ցանգապատ
Ընդ Հովանեաւ պահակաց
Այժմ, բաց սին անապատ
Տեղի գողոց, հրոսակաց։
'Ի սա փոխան բարձուղէշ
Ծառոց, տնկոց պտղալի
Եւ ուր ծաղկունք գեղաղէշ՝
Այժմ տատասկք Նոցկտալի։

Ո՞ր սորա հով, ցօղ, զեփիւռ,
Հոգեզուարճ Նախնի զարդք,
Ո՞ր պարզ արեգ լուսապիւռ
Հեղեկ զարուն անոյշ վարդք։
Ո՛հ քակեցան ձեղաբարձ
Սորա ամուր հին որմունք,
Կորեան պճնանք, գեղ անդարձ
Այժմ բուսանին որոմունք։
Ո՛հ 'ի սմանէ մերժեցան
Սոխակք, տատրակք բաց 'ի բաց.
Եւ այժմ 'ի թիռս ցիր և ցան
Յօտար 'ի ծագս կան վայրաց։
Հայեաց՝ տես Ցէր, զարմանն տար
Ժառանգութեանդ յաւերժից
Դու միայն սմա խնամատար
Պահեա զսա չար յիժից։
Շարժեաց 'ի գութ Աստուած մեր՝
Տուր վայելել վերստին
Զնախնի զարուն բարեբեր
Քո բանաւոր փոքր հօտին։

LIV.

Մաշկեանք մանկան յաւուրս պաշտօնէ։

Կարդամ առ քեզ Աստուած՝ Հայր,
Ուսեալ յՈրդւոյդ Միածնէ,
Որպէս խրատեաց և իմ Պայր՝
'Ի անունդ հոգւոյս 'ի ծընեալ։
Հայր բնակիս 'ի բարձունս,
Պատեալ սքանչելագործութեամբ

Բարեբանիս յերգս քաղցրունս
Ջերմ 'ի թախանձս երկրայնովք։
Սուրբ է անունդ, մեծ յաւէտ
Քաղցր, տհաւոր, և հրզօր.
Ընճաւ, աներբ և անիէտ՝
Օրհնեալ Հայր մեր երկնաւոր։
Գոսրծ են ձեռացդ տիեզերք,
Աբքայութիւնդ անքսպառ,
Եւ ընդ ոտիւք քո եթերք
Վեհ մեծութեանդ ցոյց պայծառ։
Երկինք ։՝ երկիր քո բանիւ
Եղեն և կան հաստատուն.
Անփոխ նոցայն զարդք անթիւ
Պահին կամօքդ իմաստուն։
Լի է աշխարհ համբէն
Բարեօք քո՝ Տէր բարերար.
Զքեզ գովեն և օրհնեն
Ամէն, զոր աջ քո արար։
Ողջ եղերաց Դու ես յոյս,
'Ի քեզ հային աչք համբուն.
Դու բաշխես մեզ զպիտոյս
Տէր խնամակալ կեանս 'ի բուն։
Թռչունք, կայտառք և դեռունք,
Սողունք 'ի ծով 'ի ցամաք,
Նոյն կենդանիք — անասունք
Յագին խնամով քո համակ.
Ինութիւն համայն քեզ ածի,
Երկիր պճնի պտղաւէտ.
Չ'են մեծ ինչ քո առաջի
Հրաշիցս՝ արարք 'ի մեր պէտ։

Ի՛ քո պարգևս այսպէս՝ Տէր,
Առհասարակ վայելեն
Անհատ, անդուլ, անտարբեր՝
Որոց որչափ վայել են։
Յայսմ՝ խնամոցդ 'ի խրախճան
Տաս կարիս և ինձ մանկան
Թարց վաստակոյ և անջան՝
Որչափ իմ՝ սիրտ, միտք ցանկան։
Ուստի թոթով ես 'ի բան
Մաղթեմ՝ յայս նոր տարեդարձ,
Լո՛ւր աղօթիցս Հայր պաշտպան,
Լո՛ւր, աղաչեմ, առ իս դարձ։
Լո՛ւր աղերսիցս 'ի բարձանց,
Խառն ընդ երգոց անմարմնոց,
Ընկա՛լ զիմ ջերմ զթախանձ՝
Տէր իմ՝ անհատ բարեաց ծոց։
Ուխտ իմ սրտի եռանդուն,
Զէ վասն և եթ իմ անձին,
Մաղթեմ 'ի պէտս ես համբուն
Արարածոց առանձին։
Տո՛ւր՝ Տէր, զկարիս աղքատաց,
Եւ զհայցուածս կարօտից,
Զբոյժ ցաւոց հիւանդաց,
Եւ նեղելոց դիւր սրտից։
Տո՛ւր զբարիս թշնամեաց,
Զազատութիւն գերելոց,
Տո՛ւր թողութիւն ատելեաց՝
Զարեաց առ իս մեղելոց։
Օգնեա՛ 'ի պէտս ծանօթից,
Անյայտից և օտարաց։

Լուր առ քեզ, Տէր, աղօթիկ,
Բարեաց ի քէն խնդրողաց։
Օգնեա՛ որբոց և այրեաց,
Տո՛ւր միշտ նոցա զպիտոյս.
Տո՛ւր զօրութիւն տրկարաց,
Պոլորելոց մտաց լոյս։
Տո՛ւր տրտմելոց միխիթար,
Զանվրդով միտս՝ թարց ցաւոց.
Ծովաչուաց զանվրթար
Զելս յաջողակ՝ զերծ հոդոց։
Մ՚եծաց, փոքունց, Հարց, Որդւոց
Զսերմ՝ շնորհաց բարելից,
Հանդչել յանխառն սիրոյ ծոց՝
Ի վայելել կեանս զանբիծ։
Շ՚նորհեա՛ հանգիստ, կեալ խաղա՛ղ
Արարածոցդ յամէն ուր,
Բարձ յամենից կամ դանդաղ
Շարեաց մեղաց զմրուր։
Տո՛ւր և զսէր միաբան
Հայկայ ազգիս հէք թշուառ,
Լեր նմա միշտ պահապան
Գթով շնորհացդ անընպառ։
Օգնեա՛ յուսով, հաւատով
Ունել միշտ սուրբ զկրօն,
Պահեա՛ ի նոյն անվրդով,
Մտօք զդաստ և զդօն։
Պահեա՛ հեռի յաղանդոց,
Բարեաց ի գործս անսայթաք,
Ընդեղջ ի հնոց աւանդոց՝
Հարց պանծալեաց հանգիստակ։

Խարձ զկնճիան լուսանայ,
Զչար նախանձն, թշնամանս,
Զբարս, զվարս թիւրագնայ՝
Միմեանց վընաս 'ի զրկանս։
Հեղ զուզղութեան ձիրս 'ի նա
Զեռանդնոտ միտս և զոգի,
Տուր սիրտ սիրով՝ յարամնայ
Կապիլ 'ի մի սիրտ, հոգի։
Զամենեսին զօրացո,
Իմաստնացո և օրհնեա,
Պատապարեա և կեցո
'Ի վտանգից ազատեա։
Լուր Տէր, հայեաց, քոյ է նա
Նախկին բաժին և վիճակ։
Մի մոռանար դու զնա
Արա շնորհացդ ընդունակ։
Դարձ դթութեամբ, Տէր Աստուած,
Դարձո նրմա զմեղմ զարուն,
Տուր վառեալ քեզ՝ վարդեկաց
Պճնիլ 'ի զարդ պատարուն։
Ծաղեսա զարեդ կենսածին,
Զի սերմունք յայս քո այգւոջ
Աճցին, բերցեն զնախկին
Հաճոյ աչացդ զբոլորջ։
Զայնիւ սրտիս անմռունջ
Առ քեզ զոչեմ, Հայր իմ արդ
Ընկալ զայս խղճ, զայս մրմունջ
'Ի մանկանէս մեղապարտ։
Դու ես մեր Տէր օգնական,
Դու և մեր յոյս, ապաւէն։

Քեզ գոհութիւն օրհնաբան
Այժմ և յապայն միշտ ամէն։

LV.

ԱՂՕԹՔ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐ ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ։

(Գլխատառք, միջնատառք և վերջատառք յօրինեն զանուն Մարիամ)

Մարիամ Սուրբ Կոյս, Մայր Տիրածին՝ յոյս պաշտպան իմ,
Լուր մաղթանացս, որովք առ քեզ ես հեգս մատչիմ։
Ընարժան եմ, Այլ արժանի դու զիս արա,
Միջնորդութեամբ առ Միածինդ, զիս և հաստեա։
Թոռմամբ սրտի Բաբունին իմ վարուց արդար
Միշտ հեռևել, գալ առ բարիս պատրաստ յօժար։
Գ՝ին եմ՝ անդին Գառին արեան՝ որ պատարագ
Եղև, Թո՛ղ մեզ արդարութեան զսուրբ տրուազ։
Ընձինս թշուառ Անչափ ցաւոց դեղ դու շնորհեա,
Զանկեալս մեղօք՝ ի մահուանէ փրկեա, կանգնեա։
Բախտաւորած, բնականին պահել պատկեր
Անկեղծ մաքուր կալ հաստատուն առ նա՝ ի սէր։
Իմ՝ ես դու յոյս, ՝ի քէն հայցեմ զայս ողբալի՝
Ընկալ զաղերս, լեր անկելոյս դու հովանի։
Տուր ինձ շնորհս, Տիրամայր Կոյս, միշտ անընդհատ,
Վարել սուրբ կեանս, անփորձ, անխառն և անարատ։

LVI.

ՄԱՂԹԱՆՔ ՅՂԱՑԵԱԼ ԿՆՈՋ

I.

Ընդդրկոզդ սիրով համայն էակաց՝
Անսահմանդ ՝ի քում բարութեան Աստուած,

Ստեղծեալ զԱդամ՝ զմարդն առաջին՝
Դու 'ի սկզբանէ անտի 'ի Դրախտին
Կարգեցեր վիճակ Սուրբ ամուսնութեան։
Զնախածնողս մարդկան սերընդեան
Օրհնեցեր ունիլ ինքեանց զաւակունս
Լցուցանելոյ զերկիր իրաւունս
Եւ նախասահման եդեր զառանձին
Կարգ իմում սեռին ծնանել զնոսին։
Նոյն իսկ օրհնութեամբ տալով զհրաման՝
Ընծիլ բազմանալ, 'ի փառս քո անուան։

2.

Յայս իսկ զդացմունս համոզման սրտիս
Խորհիմ, խոհակցիմ ինքս յինքեան ընդ իս՝
Թէ ի՞ հատուցից չնչինս 'ի տրիտուր
Քեզ վասն բարեաց, զոր դու ինձ ետուր
Զի արարածոց քոց յանթուելի
'Ի տարածութեան անընդդրկելի՝
Որք կացուցանեն զաշխարհս տեսական,
Ստեղծեալ և դքո խնամքդ Հայրական,
'Ի ծընէ անտի մինչ ցայս օր կենացս
Ո՛չ դադարեցար հոգալ զկարեացս։
Պահեցեր ամուր զիս ընդ հովանեաւ
Հզօր պետութեանդ՝ բարեօք քո անբաւ
Ցերթս և 'ի նիստս, 'ի քուն և արթուն
Ցամէն 'ի դիպուածս կենաց զոր 'ի բուն։

3.

Դու և զուգեցեր զիս ամուսնական
Ընդ իմ կենակցի կապով անբաժան։

Գոհանամ զքէն բոլորով սրտիւ,
Զի դու իմ Աստուած զթով քո անթիւ
Արժան արարարեր զիս այսմ վիճակի,
Եւ այժմեան գրութեան՝ յիս նոր էակի,
Յորում և զգամ, ճանաչեմ զիս մայր,
Ըստ սուրբ քո կամայ՝ բարերար Տէր Հայր։
Քաղցր է յոյժ այո՛ այս կոչումն վասն իմ,
Բայց ըստ զգացմանցս քեզ խոստովանիմ՝
Ըստ օրինակի սուրբ Սաղոմէին,
Զի հասու լինիլ ո՛չ կարեմ ինքնին՝
Թէ զիարդ կազմեալ ձևացաւ, ածի
Յիս այս նոր քաղցրիկ զոյակ կենդանի։
Ինձ չէր հընարին, ո՛չ ես արարի
Զքնքուշ անդամն նորայն, և ո՛չ մի,
Զմասն ինչ կազմել կարէ յէից ոք,
Ո՛չ հոգևորել զայնպիսին կենօք։
Յառաջ աղերեդ ինձ պարգևեցեր
Զկութիւն, զկեանս նոր արարածոյդ,
Որ շարժմամբ իւր յիս եղոյց զութ զքոյդ։
Օրհնեմ և գովեմ զքեզ իմ Աստուած,
Գոհութիւն վասն այսր մեծի քո շնորհաց։
Պահեա ողջ, անբիծ զայր իմ՝ սորա հայր
Արա արժանի և զիս լինիլ մայր
Նման երջանիկ այնոցիկ սուրբ մարց,
Որք վիճակեցան ունիլ ինքեանց վարձ,
Հանդերձ ծնելովք իւրեանց զաւակօք,
Զյաւիտենից կեանս ուրախ ւ՞ անհոգ։

4.

Ուսո՛ ինձ լինիլ զգաստ միշտ 'ի բարս,
Եւ զգոյշ վարիլ յամէն ճանապարհս.
Զի մի՛ ես եղեց 'ի դրութեանս անփոյթ
'Ի վնասել իւիք նոր արարածոյդ,
Զոր դու շնորհնեցեր յիս շնչմամբ կենաց
Գալ յաշխարհ 'ի թիւս զործոց քոց ձեռաց։
Հեռացո՛ յինէն զգացմունս զայրացման,
Զախորս փափկասէր, զոգի հեշտութեան,
Զի մի՛ մեղսահիթ այս կիրք չարաչար
Դարձցին 'ի բնութիւն զաւակիս արդար.
Եւ զի մի՛ նա վատ ուղղութեամբ բարուց
Զրկեսցի 'ի քոյդ բարեբաշխ վարձուց
Այլ շնորհեա՛ ինձ, Տէր, 'ի սրտէ խորին՝
Զերդ մայր Սամուէլի սուրբ Մարգարէին,
Աղօթիւք, պահօք, կենօք սրբութեան
Արժանի լինիլ մօր՝ ծնողի անուան։

5.

Մ՚աքրեա՛ զիս, մաղթեմ՝ յաղտեղի մեղաց,
Յամէն չար զործոց նախնի յանցանաց.
Զի զգամ՝ իբրև ես 'ի մեղս ծընայ,
Նոյնպէս և 'ի մեղս զա՛ յղացայ։
Ուսո՛ի հաւատով ես խոստովանիմ՝,
Թէ միայն արդար ես դու Փրկիչ իմ.
Դու միայն անմեղ 'ի յաւիտենից,
Սրբութեամբդ անհաս էից բընաւից։
Դու միայն միջնորդ՝ բարձօղ մեր մեղաց,
Միայն հաշտարար ընդ հօր մեր զթած։

Անկանիմ յերկիր առաջի քո Տէր
Եւ զղջմամբ սրտի յիմ մեղս, մարդասէր՝
Ցանձն առնեմ զիս քեզ բոլորովին,
Հայրական խնամոց սուրբ կամաց քոյին։
Աղաչեմ զանբաւ զքոյ բարութիւն,
Հաստեա զարարածդ՝ յիս նոր գոյութիւն։

6.

Օ՜օրացո՛ շնորհիւդ զանձն իմ զտկար,
Տանիլ յղութեանս վշտալից, դժուար։
Գիտելով զսուրբ քո նախասահման
'Ի դէմս մեր Աստ առաջնոյ հրաման,
Մնամ այլ և դառն ապեւոց ծննդեան,
Ընդ նմին գուցէ նաև իսկ մահուան։
Ո՛հ, հպատակիմ հեղութեամբ հոգւոյ
Ո՛չ իմ եղեցին, այլ որպէս կամք քոյ։
Բայց ընկալ զաղօթս քեզ, Տէր՝ 'ի հաճոյս,
Տա՛ր ոյժ, զօրութիւն տկար կազմուածոյս
'Ի ժամ ազատման 'ի յղութենէս
Անփորձ ծննդեամբ գալ 'ի նոր հանդէս
Մեծազօր փառացդ նոր արարածով,
'Ի մասն իմ բաժին քոյ շնորհիւ, զթով։
Իսկ երբ եկեսցէ նա յաշխարհ 'ի լոյս,
Երբ առ խնդութեանս՝ 'ի դէմս ծընելոյս,
Ես ընդ քում անդարձ բանից սուրբ յաւէտ,
Մոռացայց զանցեալ զդառն իմ զաղէտ,
Ապա մարդասէր Տէր իմ ապաւէն,
Մի դարձուցաներ զերեսս քո յինէն,
Մի թողուր և զեմ մանկիկ նորածին,
Լեր նմա պաշտպան խնամօք առանձին։

7.

Վերածնեա՛ զնա սուրբ աւազանաւ,
Զօրացո՛, սրբեա՛ շնորհիւդ անդրաւ։
Տո՛ւր նմա աճել ըստ հոգւոյ, մարմնոյ,
Մոյծ յորդեցրութիւն հօր քում երկնայնոյ
Տո՛ւր նմա լենիլ անդամ կենդանի
Քոյ խորհրդաւոր մարմնոյ արժանի՝
Սուրբ եկեղեցւոյդ Որդի հարազատ,
Ի թիւր գնացից, յարատից ազատ։
Անսացող, հլու քոց պատուիրանաց,
Պահող աւանդոց, Սրբոց օրինաց։
Զի և նա իւրովք կենօք ուղղագնաց
Արժանի լեցի շնորհացդ պարգևաց
Իակ եթէ յայսմիկ իմ ակնկալեալ
Ազատմանս իցէ նախասահմանեալ
Ինձ վերջին օրհաս՝ վերջ ասի կենաց,
Թո՛ղ քոյ եղեցին սուրբ կամք իմ Աստուած,
Միայն աղաչեմ զՏերդ բարերար,
Մի՛ ըստ իմ գործոց դատիր զիս արդար։
Այլ ողորմեա՛ ինձ՝ զայս բազում գթոյդ,
Ի փառս Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյդ։

ԿԵՆՍՐ. - ԳՐՔ. - ԸՆԹԵՐ. - ԻՄ.
Ц. 2 Р. Գրքեր.
– 6 ՅՈՒՆԻՍ 1898
Ценз. Арм. Благ. Общ.

ՎԵՐՋ Ա. ՏԵՏՐԱԴԻ

ՅԱՏԿ

—

	Երես.
1· Մեծ է մեր Աստուած	5
2· Ես երես անկեալ	7
3· Տէր իմ հոգւոյն	—
4· Դու հովիւ բարի	8
5· Ախ, ես ո՞ւր գտնեմ	9
6· Ո՛վ աղբիւր անհատ	10
7· Ո՞վ գառնդ անմահ	11
8· Դէպ 'ի քեզ, Տէր իմ	—
9· Ախ, ո՞ւր թաք կենամ	12
10· Տէր, անչափ է քո սէր	13
11· Տէր, ո՞վ եմ ես	14
12· Եթէ իմ հոգին	—
13· Անպատմելի է	15
14· Ե՛ս եմ Տէր Աստուած	—
15· Օրհասին իմ, Տէր	16
16· Ե՛կ մխիթարող	17
17· Տէր, Դու ես	18
18· Տէր, մանուկ եմ ես	—
19· Դու՝ ո՛չ արտասուք	19
20· Իմ Փրկիչ Աստուած	20
21· Երբ ես նայումեմ	—
22· Տէր՝ ահա՛ հոգիս	21

Երես.
23· Ահա՛ Հրեշտակաց 21
24· Ուրախ կաց, ուրախ. 22
25· Մարդ մահկանացու 23
26· Սիրենք, քրիստոնեայք 24
27· Տէր, Դու ինքդ մեր . . . . . —
28· Քո ձեռն, որ 25
29· Ո՜հ, երանի թէ . . . . . —
30· Ո՛հ, բաղդաւոր եմ. 26
31· Տէր ինձ զօրութիւն 27
32· Բանն Աստուած առաւ . . . . . —
33· Թափեցէք, աչքերս 28
34· Աստուած, իմ Փրկիչ 29
35· Ա՛խ, էր քեզ 31
36· Տէր, Դու կեանքիս լոյս . . . . . —
37· Սիրա իմ, վառ սէրով 33
38· Դէպ 'ի խաչ Փրկչին 35
39· Տէր, Փրկիչ . . . . . —
40· Ես թոյլ և անզօր 36
41· Ինչպէս ծարաւի . . . . . —
42· Երբ որ տեսնումեմ. 38
43· Եկէք և տեսէք . . . . . —
44· Ծագեց արեգակն 39
45· Դու Տէր իմ Աստուած . . . . . —
46· Կենդանի է Տէր. 40
47· Իմ բոլոր փափաքս. 42
48· Շեմ մոռանալ, Տէր . . . . . —
49· Ա՛խ, երանի թէ. 43
50· Հիւանդ եմ, ցաւս է 44
51· Մէք մեղաւոր ենք 45

Եր.

52· Իմ հոգին ունի 46
53· Աստուած զօրութեանց 47
54· Կարդամ առ քեզ 48
55· Աղօթք առ Տիրամայր 53
56· Մաղթանք յղացեալ կնոջ . . . . . —

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ։

—

Էջ։	Տող։	Սխալ։	Ուղիղ։
6	24	բաժիններէ	բաժիններէ։
»	25	մենք	մեք։
7	21	Միշտ	Վիշտ։
15	8	քան	քուն։
16	21	Քեզ իմ	Քեզ եմ։
18	1	Զորացուր	Զօրացուր։
»	10, 11	Ո՞վ	Ով։
19	1	իմ	եմ։
21	21	անմեղ	անեղ։
22	25	Ծրնաւ	Ծնաւ։
26	7	Ընդունել	Ընդունել։
»	20	արօր	արօտ։
29	7	Աստուածային	աստուածային։
31	21	Տու	Տուր։
33	26	Կ՝երգէ	Կ՝երգեմ։
39	7	Մենք	Մեք։
42	12	փայլուն	փայլեւն։
46	4	մանրքենք	մաքրենք։
»	21	ձանրալից	ձանձրալից։
49	1	քաղցրունս	քաղցունս։
»	11	ւ՞	ւ։
54	10	դքո	դիս։
55	3	արարարեր	արարեր։

ՀՀ Ազգային գրադարան
NL0349186